Արձանագրություն
Քրոնիկ հիվանդությունների գնահատման
բոլոր տարիքային խմբերի համար

Միզասեռական համակարգի հիվանդություններ /Urology/

Օրգանիզմի ֆունկցիաներ և մարմնի կառուցվածք

Օրգանիզմի ֆունկցիաներ		**Որակիչ**
b280	**Ցավի զգացողություն** Ընդհանուր կամ տեղային ցավի զգացողություն /ցավ մարմնի որևէ մասում, ամբողջ մամնով ցավի զգացում/	
b410	**Սրտի ֆունկցիաներ** Սրտի արյունն ամբողջ մարմնով անհրաժեշտ քանակությամբ և ճնշումով մղելու /օրինակ՝ կարդիոմիոպաթիաների, սրտի ռիթմի խանգարման, սրտի իշեմիկ հիվանդության և այլնի հետևանքով առաջացած սրտային անբավարարություն/	
b415	Արյունատար անոթների ֆունկցիաներ Արյունատար անոթներով՝ զարկերակներով, մազանոթներով և երակներով արյան հոսքը ամբողջ մարմնում ապահովելու /ներառյալ երակների վարիկոզային հիվանդություն / լայնացում/, էնդարթերիտներ /ընդմիջվող կաղություն/, աթերոսկլերոզ և այլն/	
b420	**Արյան ճնշման ֆունկցիա**	
b430	**Հեմատոլոգիական համակարգի ֆունկցիաներ** **Արյունաստեղծման և ոսկրածուծի ֆունկցիաների** Արյան՝ նյութափոխանակության ֆունկցիանեի /լիմֆոգրանուլոմատոզ, միելոմային հիվանդություն, լեյկոզներ, հեմոլիտիկ անեմիա և այլն/; Արյան մակարդելիության ֆունկցիաների /հեմոֆիլիա,	

	կոագուլոպաթիա և այլն/	
b435	**Իմունային համակարգի ֆունկցիաներ** Իմունային համակարգի ախտահարման հետևանքով առաջացած աուտոիմուն ռեակցիաների /ռևմատիկ և համակարգային հիվանդություններ/	
b440	**Շնչառական ֆունկցիա**ներ Օդը թոքեր ներշնչելու, օդի և արյան միջև գազափոխանակության, արտաշնչելու, շնչառության հաճախության,	
b455	**Ֆիզիկական ծանրաբեռնվածության տանելիության ֆունկցիաներ** Շնչական և սրտանոթային համակարգերի՝ Ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ դիմադրողականության հետ կապված ֆունկցիաներ, օր.՝ դիմացկունությունը, հոգնելիությունը և այլն	
b540	**Ընդհանուր նյութափոխա-նակության ֆունկցիաներ** Հիմնական բաղադրիչների՝ ածխաջրատների, սպիտակուցների և ճարպերի, դրանց քայքայման և էներգիայի փոխարկման կարգավորման	
b555	**Ներզատիչ գեղձերի ֆունկցիաներ** Հորմոնների արտադրման և հորմոնների մակարդակի կարգավորման, այդ թվում ցիկլային փոփոխությունների /շաքարային դիաբետ, վահանաձև գեղձի հիվանդություններ, մակերիկամային անբավարարություն, Կուշինգի հիվանդություն և այլն/	
b610	**Միզագոյացման ֆունկցիաներ** Մեզի ֆիլտրման, մեզը հավաքելու, միզագոյացման և միզարձակման /երիկամային աբավարարություն, անուրիա և այլն/	
b620	**Միզարձակման ֆունկցիաներ** Միզապարկից մեզը հեռացնելու ֆունկցիաները՝ ներառյալ	

	միզարձակման, միզարձակման հաճախականության, օր, անմիզապահություն, ակամա միզարձակում, միզարգելում և այլ	

5

Մարմնի կառուցվածք		որակիչ
s 610	**Միզային համակարգի կառուցվածք** Երիկամներ, միզածորաններ, միզապարկ, միզուկ	
s 630	**Վերարտադրողական համակարգի կառուցվածք**	

(d) Գործունեություն և մասնակցություն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ		Կատարողականի որակիչ	Կարողության որակիչ
d110	**Դիտելը (նայելը)** Տեսողական ազդակներն ընկալելու նպատակով տեսողության զգայարանը նպատակաուղղված /մտադրված կերպով օգտագործելը, ինչպես օրինակ՝ առարկային հետևելը, մարդկանց դիտելը, մարզական իրադարձություն, որևէ անձի կամ խաղացող երեխաներին նայելը:		
d115	**Լսելը** Լսողական զգայարանի միջոցով լսողական ազդակների գիտակցված ընկալում, օրինակ՝ մարդու ձայնը լսելը, երաժշտություն ունկնդրելը:		
d140	**Կարդալ սովորելը** Գրավոր նյութերը (այդ թվում՝ Բրայլի այբուբեն և այլ խորհրդանիշներ) սահուն և անսխալ կարդալու հմտությունը		

	զարգացնելը, ինչպես օրինակ՝ նիշեր և այբուբեններ ճանաչելը, գրված բառերը ճիշտ արտասանելը և բառեր ու բառակապակցություններ հասկանալը:		
d145	**Գրել սովորելը** Ձայներ, բառեր կամ բառակապակցություններ ներկայացնող խորհրդանիշներ (այդ թվում՝ Բրայլի այբուբեն կամ այլ խորհրդանիշներ) արտաբերելու հմտությունը զարգացնելը, ինչպես օրինակ՝ ուղղագրության և քերականական կանոններին հետևելը:		
d150	**Հաշվել սովորելը** Թվերով աշխատելու և պարզ ու բարդ մաթեմատիկական գործողություններ կատարելու այնպիսի հմտությունները զարգացնելը, ինչպիսիք են գումարման և հանման մաթեմատիկական նշանները գործածելը և խնդիր լուծելիս ճիշտ մաթեմատիկական գործողություններ կիրառելը:		
d155	**Հմտություններ ձեռք բերելը** այնպիսի հմտությունների ձեռքբերումը ինչպիսիք են գործիքները կամ խաղալիքներ գործածելը կամ խաղեր խաղալը:		
d160	**Ուշադրության կենտրոնացնելը** Կոնկրետ ազդակների վրա մտածածին կենտրոնանալը, միջավայրում փոփոխությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելը: Միջավայրի որոշակի տարրերին մտադրված ուշադրություն դարձնելը, ինչպիսիք են ֆիզիկական կամ սոցիալական ազդակների որակի, քանակի կամ ուժգնության փոփոխությունները		

d161	**Ուշադրությունը պահպանելը** *Համապատասխան ժամանակահատվածում կոնկրետ գործողություններին կամ առաջադրանք-ներին ուղղված ուշադրությունը մտադրված կերպով պահպանելը*		
d163	**Մտածելը** Մտքեր, գաղափարներ և պատկերներ ձևակերպելը (բառախաղ, մտագրոհ, խորհել)		
d166	**Կարդալը** Գրավոր նյութի (օրինակ՝ գրքերի, ցուցումների, թերթերի, սովորական տեքստով կամ Բրայլի այբուբենով գրված) ընկալմանն ու մեկնաբանմանն առնչվող գործողություններ կատարելը՝ ընդհանուր գիտելիքներ կամ հատուկ տեղեկություններ ստանալու նպատակով:		
d170	**Գրելը** Նշանային համակարգ կամ լեզու գործածելը կամ գրի առնելը՝ տեղեկություն հաղորդելու նպատակով (ստեղնաշարով տպելը, Բրայլի այբուբենով գրելը), ինչպես օրինակ՝ իրադարձություններ կամ մտքեր գրի առնելը (ներառյալ ստեղնաշարով տպելը, Բրայլի այբուբենով գրելը)		
d172	**Հաշվելը/հաշվարկելը** Մաթեմատիկական սկզբունքների հիման վրա՝ բառերով ձևակերպված խնդիրների լուծման համար հաշվելը/հաշվարկներ կատարելը, արդյունքներն արտահայտելը կամ գրելը (ստեղնաշարով տպելը, Բրայլի այբուբենով գրելը), օրինակ՝ երեք թվի գումար հաշվարկելը:		
d175	**Խնդիրներ լուծելը** Հարցադրումների կամ իրավիճակների		

	համար լուծումներ գտնելը՝ հարցերի էությունը որոշելու և վերլուծելու, տարբերակներ և լուծումներ կազմելու, լուծումների հնարավոր արդյունքները գնահատելու և ընտրված լուծումը կատարելու միջոցով		
d177	**<u>Որոշումներ կայացնելը</u>** Ընտրություն կատարել մի շարք տարբերակներից, իրագործել ընտրված տարբերակը և գնահատել ընտրված տարբերակի արդյունքները, ինչպես օրինակ՝ որոշակի իր ընտրելը և գնելը, կամ մի շարք առաջադրանքների թվից որոշել կատարել անհրաժեշտ մեկ առաջադրանք և այն կատարել՝ բացառությամբ մտածելու (d163), խնդիրներ լուծելու (d175):		
d210	**Առանձին առաջադրանքներ կատարելը** Առաջադրանքի կատարումը սկսելը, ժամանակի, տարածության և առաջադրանքի համար նախատեսվող նյութերի օգտագործումը կազմակերպելը, առաջադրանքի կատարման ժամանակը սահմանելը և առաջադրանքը կատարելը, ավարտելը և դրա արդյունքներն ամրապնդելը:		
d220	**Համալիր առաջադրանքներ կատարելը** Հերթականությամբ կամ միաժամանակ պարզ կամ բարդ և համակարգված գործողություններ կատարելը, որպես համալիր, ինտեգրված և բաղադրյալ առաջադրանքների մասեր:		
d230	**Առօրյա կյանքը կազմակերպելը** Պարզ կամ բարդ համակարգված գործողություններ իրականացնելը, առօրյա կյանքը կամ պարտականությունների, օրվա ռեժիմը պլանավորելը, կառավարելն ու կատարելը, սեփական ժամանակը		

	պլանավորելը և կառավարելը		
d240	**Սթրեսը և այլ տեսակի հոգեբանական լարվածությունը կառավարելը** արդ կամ պարզ գործողություններ կատարելիսհոգեբանական լարվածությունը կառավարելը և վերահսկելը, օրինակ՝ առաջադրանքը որոշակի ծամկետում ավարտելը, նոր միջավայրում սթրեսը, ճգնաժամը կառավարելը:		
d250	**Սեփական վարքագիծը կառավարելը** Նոր իրավիճակներին, մարդկանց կամ փորձառությանը համապատասխան՝ պարզ կամ բարդ և ուղղորդված գործողություններ հետևողականորեն կատարելը, ինչպես օրինակ՝ գրադարանում լուռ մնալը:		
d310	**Հաղորդակցվելիս բանավոր հաղորդագրություն-ներն ընկալելը** Բանավոր հաղորդագրությունների բառացի ենթադրվող իմաստները ընկալելը		
d315	**Հաղորդակցվելիս ոչ վերբալ հաղորդագրություններ ընկալելը** Ժեստերով, նշաններով և նկարներով փոխանցվող հաղորդագրությունների ուղիղ և փոխաբերական նշանակությունների ընկալումը: Ներառյալ ժեստերի լեզուն, ընդհանուր նշանները, նկարները և լուսանկարները ընկալելը:		
d325	**Հաղորդակցվելիս գրավոր հաղորդագրություններ ընկալելը** Գրավոր խոսքի (այդ թվում՝ Բրայլի այբուբենի) միջոցով փոխանցվող հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստները ընկալելը:		

d330	**Խոսելը** Բառերի, արտահայտությունների կամ բանավոր խոսքի առավել երկար պարբերությունների արտաբերումը, ուղիղ և փոխաբերական իմաստներով պարզ և բարդ հաղորդագրություններ կազմելը		
d345	**<u>Գրավոր հաղորդագրություններ կազմելը</u>** Գրավոր խոսքի միջոցով փոխանցվող հաղորդագրությունների բառացի և ենթադրվող իմաստներն արտահայտելը:		
d350	**Զրույցը** Մտքերի և գաղափարների փոխանակում սկսելը, շարունակելը և ավարտելը՝ բանավոր, գրավոր խոսքի, ժեստերի լեզվի կամ լեզվական այլ միջոցների օգնությամբ, ծանոթ կամ անծանոթ մեկ կամ մի քանի անձանց հետ՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ իրավիճակներում:		
d355	**<u>Քննարկումը</u>** Հարցի ուսումնասիրությունը կամ բանավեճը սկսելը, շարունակելը և ավարտելը, դրան ձև հաղորդելը և ավարտելը:		
d360	**<u>Հաղորդակցության սարքեր և մեթոդներ օգտագործելը</u>** Հաղորդակցության նպատակով սարքեր, մեթոդներ և այլ միջոցներ օգտագործելը, ինչպես օրինակ՝ ընկերոջը հեռախոսով զանգահարելը՝ ներառյալ հեռահաղորդակցության սարքեր, տպագրական մեքենաներ և հաղորդակցության մեթոդներ օգտագործելը:		

d430	**Առարկաներ բարձրացնելը և տանելը** Առարկաները մեկ տեղից մյուսը տեղափոխելը:		
d440	**Դաստակի նուրբ շարժումներ կատարելը** Առարկաները գործածելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, առարկաները վերցնելը, գործածելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մետաղադրամներ վերցնելը կամ բռնակը պտտելը:		
d450	**Քայլելը** Ոտքով կարճ տարածություններում՝ տանը, բակում, տեղաշարժվելը		
d455	**Տեղաշարժվելը** Աստիճաններ բարձրանալը (քայլելով կամ մագլցելով), ցատկելը կամ վազելը (նաև խոչընդոտները շրջանցելը):		
d470	**Փոխադրամիջոցից օգտվելը** Օգտվելը հանրային փոխադրամիջոցից՝ ավտոբուսից, միկրոավտոբուսից, տաքսուց կամ մասնավոր փոխադրամիջոցից՝ որպես ուղևոր:		
d510	**Լվացվելը – լոգանք ընդունելը** Սեփական մարմինը ամբողջությամբ կամ դրա մասերը լվանալը և չորացնելը		
d520	**Մարմնի խնամքը** Մարմնի մասերի՝ մաշկի, դեմքի, ատամների, գլխամաշկի, եղունգների խնամքն իրականացնելը		

d530	**Բնական կարիքները հոգալը** Արտաթորանքը (միզարձակում և կղազատում) հեռացնելու պահանջն զգալը, իրականցնելը և դրանից հետո մարմինը մաքրելը		
d540	**Հագնվելը** Կոշիկներն ու հագուստը հագնելու և հանելու համաձայնեցված գործողություններ կատարելիս, կլիմայական և սոցիալական պայմաններին հետևելը		
d550	**Ուտելը** Սնունդն ստանալու կարիքը զգալը և ուտելուն ուղղված գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը, կտրատելը և այլն:		
d560	**Խմելը** Խմելու կարիք զգալը և ըմպելիքով տարան վերցնելը, այն բերանին մոտեցնելը և ըմպելիքը տվյալ մշակույթում ընդունված եղանակով խմելը, խմելու համար նախատեսված հեղուկներ խառնելը, ժամանակ առ ժամանակ խառնելը և լցնելը, շշեր և թիթեղամաններ բացելը, ձողիկով խմելը կամ հոսող ջուր խմելը՝ ծորակից կամ աղբյուրից:		
d570	**Սեփական առողջությանը հետևելը** Սեփական անձի առողջության մասին հոգալը, սննդակարգը և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը պահպանելը, առողջությանը հետևելը		
d620	**Ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելը** Առօրյա կյանքի համար անհրաժեշտ բոլոր ապրանքները և ծառայություններն		

	ընտրելը, ձեռք բերելը և դրանք փոխադրելը:		
d630	**Կերակուր պատրաստելը** Սեփական անձի կամ այլ անձանց համար պարզ կամ բարդ կերակուրների պատրաստումը ծրագրելը, կազմակերպելը, դրանք պատրաստելը և մատուցելը, ինչպես օրինակ՝ ուտելու համար պիտանի սննդամթերք և ուտելիք ընտրելը, ուտեստ պատրաստելու համար բաղադրամասերն իրար միացնելը, էլեկտրաէներգիայի միջոցով կերակուր, սառը ուտեստ և ըմպելիք պատրաստելը, ինչպես նաև սննդամթերքը մատուցելը՝ տարիքին համապատասխան:		
d640	**Տնային գործեր անելը** Տանը մաքրություն անելը, հագուստներ լվանալը և չորացնելը, խոհանոցը և սպասքը մաքրելը, կենցաղային տեխնիկա օգտագործելը, աղբը թափելը		
d710	**Հիմնական միջանձնային փոխհարաբերու-թյուններ** Հարաբերություններում հար-գանք, ջերմություն, երախտա-գիտություն և հանդուրժողակա-նություն ցուցաբերելը, հարա-բերություններում քննադա-տությանը և սոցիալական ազդակներին արձագանքելը և հարաբերություններում համապատասխան ֆիզիկական կոնտակտ ունենալը		
d720	**Բարդ միջանձնային փոխհարաբերություններ** Այլ մարդկանց հետ շփումը պահպանելը և կառավարելը՝ տվյալ իրավիճակում և հասարակության համար ընդունելի		

	եղանակով, ինչպես օրինակ՝ հույզերը և մղումները զսպելու, լեզվական և ֆիզիկական ագրեսիան կառավարելու, սոցիալական շփման մեջ ինքնուրույն գործելու, ինչպես նաև հասարակական կանոններին և պայմանականություններին համապատասխան գործելու միջոցով՝ սոցիալական կանոններին համապատասխան շփվելը և սոցիալական տարածություն պահպանելը:		
d740	**<u>Ֆորմալ հարաբերություններ</u>** Ֆորմալ միջավայրում ուսուցիչների, մասնագետների կամ ծառայություններ մատուցողների հետ կոնկրետ հարաբերություններ հաստատելը և պահպանելը		
d750	**<u>Ոչ ֆորմալ հարաբերություններ</u>** *Ոչ ֆորմալ միջավայրում աշխատակիցների, ընկերների, համայնքի բնակիչների հետ հարաբերություններ հաստատելը և պահպանելը*		
d760	**Ընտանեկան հարաբերություններ** Անմիջական ընտանիքի, մերձավոր ազգականների հետ ազգակցական հարաբերություններ հաստատելը և պահպանել		
d825	**Նախնական մասնագիտական ուսուցումը** Արհեստի , աշխատանքի կամ մասնագիտության հետ կապված զբաղվածության նախապատրաստվելու նպատակով մասնագիտական		

	վերապատրաստման ծրագրի բոլոր գործընթացներում ներգրավվելը ուսումնական նյութը սովորելը		
d830	**<u>Բարձրագույն կրթությունը</u>** Համալսարաններում, մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի մեջ ներգրավվելը, որակավորման աստիճաններ, դիպլոմներ և այլ հավաստագրեր ստանալու համար պահանջվող ուսումնական ծրագրի բոլոր բաղադրիչները սովորելը:		
d845	**Աշխատանք գտնելը, պահպանելը և աշխատանքից դուրս գալը** Աշխատանք փնտրելը, գտնելը և ընտրելը, աշխատանքի ընդունվելը և առաջարկ ընդունելը, աշխատանք պահպանելը, զբաղմունքի կամ մասնագիտության մեջ առաջխաղացում ունենալը: Վարձատրության դիմաց աշխատանքային առաջա-դրանքները կատարելը		
d860	**Հիմնական տնտեսական գործարքներ** Ցանկացած տեսակի պարզ տնտեսական գործարքի մասնակցելը, ինչպես օրինակ՝ սննդամթերք գնելու համար դրամ օգտագործելը:		
d880	**<u>Խաղերի մեջ ներգրավվելը</u>** *Առարկաներով, խաղալիքներով, նյութերով կամ խաղերով նպատակաուղղված, հեգևոողական կերպով զբաղվելը՝ ինքնուրույն կամ այլ*		

	անձանց հետ միասին:		
d910	**Համայնքային կյանքը** Համայնքի սոցիալական կյանքում ներգրավվելը, ինչպես օրինակ տարբեր տիպի պաշտոնական և ոչ պաշտոնական արարողություններին մասնակցելը՝ համերգներ, միջոցառումներ, հարսանիքներ, հոգեհանգիստ, հավաքույթներ այգիներում և փողոցներում, սրճարաններում և այլն		
d920	**Հանգիստը և ժամանցը** Ցանկացած տեսակի խաղային, ժամանցային միջոցառումներին մասնակցելը, սիրելի զբաղմունքով, հանգստով զբաղվելը		

20

(e) ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		Որակիչներ՝ Խոչընդոտ
e1. ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ		
e110	**Անձնական սպառման ապրանքներ կամ նյութեր** Ներքին ընդունման նպատակով սննդամթերքի, ըմպելիքի և դեղորայքի անհրաժեշտությունը	
e115	**Առօրյա կյանքում անձնական օգտագործման արտադրանք և տեխնոլոգիաներ** Առօրյա կյանքում անհրաժեշտ իրերի/պարագաների, ինչպես օրինակ՝համապատասխան հագուստ, հարմարեցված կահույք, կենցաղային սարքերի, ընդհանուր նշանակության օժանդակ արտադրանքների անհրաժեշտությունը	

ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		Որակիչներ՝ Խոչընդոտ
e120	**Շենքային պայմաններում և դրսում անձի շարժունակության ու փոխադրման համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ** Ներս և դուրս անելու համար անձի փոխադրման, շարժունակության համար անհրաժեշտ հատուկ միջոցների/պարագաների անհրաժեշտությունը	
e125	**Հաղորդակցության համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ** Տեղեկատվություն ուղարկելու և ստանալու սարքերի ու տեխնոլոգիաների՝ լսողական, ձայնաստեղծ, հեռախոսային սարքերի, ավտոմատացված սարքերի անհրաժեշտությունը	
e135	**Աշխատանքի համար նախատեսված արտադրանք և տեխնոլոգիաներ** Աշխատանքին գործունեությունը օժանդակելու համար օգտագործվող սարքավո-րումների, արտադրանքի և տեխնոլոգիաների առկայությունը կամ բացակայությունը	
e150	**Հանրային օգտագործման շինությունների համար նախատեսված նախագծային, շինարարական և շենքային արտադրանք և տեխնոլոգիաներ** արտադրանք և տեխնոլոգիաներ, որոնք նախագծվում և կառուցվում են հանրային շինություններում ու դրանցից դուրս անձին հարմարեցված միջավայրի ձևավորման համար՝ այդ թվում՝ դիզայնը, մուտքերի և ելքերի, ներքին հարմարությունների և ցուցանակների կառուցումն ու հարմարեցումը:	
e155	**Սեփական տան, շինությունների համար նախատեսված նախագծային, շինարարական ու բնակարանային պայմաններ և տեխնոլոգիաներ** Տուն կամ բնակարան ներս ու դուր անելիս, տան կամ բնակարանի ներսում տեղաշարժվելիս պայմանների առկայությունը կամ բացակայությունը	
e3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		

ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		Որակիչներ՝ Խոչընդոտ
e310	**Անմիջական ընտանիքի անդամներ** Անմիջական ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական օգնություն և հոգեբանական աջակցության առկայությունը կամ բացակայությունը	
e320	**Ընկերներ** Անձիք, որոնց հետ գոյություն ունեն մոտիկ և շարունակական հարաբերություններ, որոնց բնորոշ էվստահությունը և փոխադարձ օժանդակությունը	
e340	**Անձնական խնամքի ծառայություններ մատուցող անձինք և անձնական օգնականներ** Անձնական խնամք տրամադրողների, անձնական օգնականների (բացառությամբ ընտանիքի անդամների) հետ ունեցած փոխհարաբերությունները	
e355	**Առողջապահության ոլորտի մասնագետներ** օր՝ բժիշկների, բուժքույրերի, հոգեթերապևտների, լոգոպեդների, սուրդոլոգների, վնասվածքաբան-օրթոպեդների, բուժ-սոցիալական ծառայության աշխատողների աջակցությունը և հարաբերությունները	
e4. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ		
e410	**Անմիջական ընտանիքի անդամների վերաբերմունքը** Անմիջական ընտանիքի անդամների ընդհանուր կամ որևէ հարցի շուրջ հստակ կարծիքը և համոզմունքը՝ անձի կամ սոցիալական, տնտեսական և այլ հարցերի շուրջ, որոնք ազդում են անձի վարքագծի և գործողությունների վրա:	
e420	**Ընկերների անձնական վերաբերմունքը,** որն ազդում են անձի վարքագծի և գործողությունների վրա:	
e440	**Անձնական խնամք տրամադրողների և անձնական օգնականների վերաբերմունքը՝** անձնական խնամքի ծառայություն մատուցող անձանց և	

ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		Որակիչներ՝ Խոչընդոտ
	անձնական օգնականների ընդհանուր կամ որևէ հարցի շուրջ կոնկրետ կարծիքը և համոզմունքը անձի կամ այլ հարցերի մասին, որոնք ազդում են վարքագծի և գործողությունների վրա:	
e450	**Առողջապահության ոլորտի մասնագետների անձնական վերաբերմունքը** Առողջապահության ոլորտի մասնագետների վերաբեր-մունքը, կոնկրետ կարծիքը, համոզմունքը ընդհանուր կամ որևէ հարցի մասին, որոնք ազդում են անձի վարքագծի կամ գործողությունների վրա	
e460	**Հասարակության վերաբերմունքը** Հասարակության, սոցիալական խմբի ընդհանուր կամ որևէ հարցի շուրջ կոնկրետ վերաբերմունքը, որն ազդում է խմբի կամ անձի վարքագծի կամ գործողությունների վրա:	
e5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
e540	**Տրանսպորտային ծառայություններ, համակարգեր՝** տրանսպորտային ծառայության կամ միջոցի առկայությունը և մատչելիությունը	
e570	**Սոցիալական ապահովության ծառայություններ, համակարգեր՝** պետական աջակցության և սոցիալական ապահովության ծառայությունների առկայությունը և մատչելիությունը, որոնց նպատակն է աջակցություն ապահովել /նպաստ, և այլն/	
e580	**Առողջապահական ծառայություններ** Առողջապահական ծառայությունների, համակարգերի առողջական խնդիրների կանխարգելման, բուժման, վերականգնողական բուժման և առողջ ապրելակեր-պի խթանման համար առկա ծառայությունների առկայությունը և մատչելիությունը	
e585	**Կրթության և վերապատրաստման ծառայություններ, համակարգեր** Կրթության, վերապատրաստման, հմտությունների ձեռք բերման, պահպանման և կատարելագործման հետ կապված	

ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		Որակիչներ՝ Խոչընդոտ
	ծառայությունների մատչելիությունը	
e590	**Աշխատանքի և զբաղվածության ծառայությունները, համակարգերը և այդ ոլորտի քաղաքականությունը՝** ծառայություններ, համակարգեր և քաղաքականություն որոնք վերաբերվում են գործազուրկ, այլ աշխատանք փնտրող անձանց համար աշխատանք գտնելուն և/կամ արդեն աշխատող անձանց օժանդակելուն:	